

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԾՁԲ-18/1-1

ք. Երևան

«22» մայիս 2018 թ.

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Էդ. Շախկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Լալայանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2481400 (երկու միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն¹:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով²:

¹ Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

² Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հարկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:³

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

³ Պեղական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎՎԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
ք. Երևան, Կառավար. տուն, մասն. 3

ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն

900011019073

ՀՎՀՀ 02508219



ԿԱՏԱՐՈՂ

Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31

«Արարատբանկ» ԲԲԸ

Հ/Հ 1510012745550100

0873228



Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50111170-2	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	471400	1	Կատարողը ծառայությունները մատուցում է իր գործունեության վայրում, իսկ ծառայության արդյունքը հանձնում է ք.Երևան, Կառավարական տուն 3 հասցեում:	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:
2	50111170-3	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	950000	1	Կատարողը ծառայությունները մատուցում է իր գործունեության վայրում, իսկ ծառայության արդյունքը հանձնում է ք.Երևան, Կառավարական տուն 3 հասցեում:	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:
3	50111170-4	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	570000	1	Կատարողը ծառայությունները մատուցում է իր գործունեության վայրում, իսկ ծառայության արդյունքը հանձնում է ք.Երևան, Կառավարական տուն 3 հասցեում:	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:
4	50111170-5	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	490000	1	Կատարողը ծառայությունները մատուցում է իր գործունեության վայրում, իսկ ծառայության արդյունքը հանձնում է ք.Երևան, Կառավարական տուն 3 հասցեում:	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

** անհրաժեշտության առաջացման դեպքում նման պահանջ առաջանալու պահից պատվիրատուի կողմից ներկայացված գրության համաձայն՝ 3 օրյա ժամկետում, իսկ ավելի դեպքում ծառայության մատուցման ժամկետը համաձայնեցնել պատվիրատուի հետ:


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարություն
ք. Երևան, Կառավար. տուն, մասն. 3
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
900011019073
ՀՀ ՀՎՀՀ 02508219



ԿԱՏԱՐՈՂ

Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510012745550100
ՀՎՀՀ 00873228



Handwritten signature

NN	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների ²			
		Չափաբաժին 1	Չափաբաժին 2	Չափաբաժին 3	Չափաբաժին 4
		5 տեղանոց մարդատար հետևի տանող / Գազ 31/	5 տեղանոց, 4 x 4 տիպի ավտոմեքենաներ/Վազ 2121, Շելյովե Նիվա/	Նիսան Իքս Թրայլ, Նիսան Պատֆայնդեր	Հունդայի Էլանտրա, Տոյոտա Կամրի
		ԱՊՀ անդամ երկրների արտադրության		Արտասահմանյան երկրների արտադրության	
1	2	3	4	5	6
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում				
1	Բռնկման համակարգի ստուգում	0	0	0	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0	0	0	0
		0	0	0	0
3	Յուղման համակարգի ստուգում	0	0	0	0
4	Արտացման համակարգի ստուգում	0	0	0	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0	0	0	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0	0	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0	0	0
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0	0	0	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0	0	0	0
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0	0	0	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0	0	0	0
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0
13	ABS համակարգի ստուգում	6000	6000	6000	6000
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0
16	Թափքի վիճակի ստուգում	0	0	0	0
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում				
	SU-2 ներառվող ծառայությունների անվանում	15000	15000	40000	40000
18	Շարժիչի հանում և տեղադրում	0	0	0	0
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	0	0	0	0
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	30000	30000	53000	53000
22	Շարժիչի վերանորոգում	0	0	0	0
23	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
24	Նույնը V6-ի դեպքում	2000	2000	5000	5000
25	Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում	2000	2000	3000	3000
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	0	0	0	0
27	Նույնը աջի համար (V6)	0	0	0	0
28	Նույնը ձախի համար (V6)	7000	7000	13000	13000
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	0	0	0	0
30	Նույնը աջի համար (V6)	0	0	0	0
31	Նույնը ձախի համար (V6)	0	0	0	0

32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	5000	5000	5000	5000
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	2500	2500	2500	2500
34	Փականի խցուկի փոխարինում	0	0	0	0
35	Նույնը V6-ի դեպքում	1000	1000	1000	1000
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	0	0	0	0
37	Նույնը V6-ի ձախի դեպքում	0	0	0	0
38	Նույնը V6-ի աջի դեպքում	0	0	0	0
39	Նույնը DOHC դեպքում	0	0	1500	1500
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	1000	1000	1500	1500
41	Հրիչների փոխարինում SOHC	0	0	0	0
42	Նույնը DOHC դեպքում	0	0	0	10000
43	Ատամնավոր փոկի փոխարինում	0	0	0	0
44	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
45	Նույնը V6-ի դեպքում	1000	1000	1500	1500
46	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	0	0	0	0
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0
48	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0
50	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	1000	1000	1000	1000
52	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	0	0	0	0
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	3000	3000	3000	3000
54	Մխոցային օդակների փոխարինում	0	0	0	0
55	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
56	Նույնը V6-ի դեպքում	1000	1000	1000	1000
57	Թափանիվի հանում և տեղադրում	0	0	0	0
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ				
58	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1000	1000	1000	1000
59	Յուղի պոմպի փոխարինում	1500	1500	2000	2000
60	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
61	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	2000	2000	3000	3000
63	Բռնկման կարգավորում	0	0	0	0
64	CO կարգավորում	0	0	0	0
65	խարնարակի հանում և տեղադրում	0	0	0	0
66	խարնարակի վերանորոգում	0	0	0	0
67	Օդի զտիչի փոխարինում	1000	1000	1000	1000
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	7000	7000	7000	7000
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	7000	7000	7000	7000
70	Բենզամոդիչի փոխարինում	2000	5000	8000	8000
71	Վառելիքի զտիչի փոխարինում	1500	1500	1500	1500
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	0	0	0	0
73	Տրամյորի հանում և տեղադրում	0	0	0	0
74	Տրամյորի վերանորոգում	0	0	0	0
75	Յուղ շարժիչի, հանքային 1լ համար	0	0	0	0
76	Յուղ շարժիչի, սինթետիկ 1լ համար	0	0	0	0
77	Յուղ շարժիչի, կիսասինթետիկ 1լ համար	0	0	0	0
	3. Սառեցման և արտաժման համակարգ				
75	Հովհարի փոկի հանում և տեղադրում	1500	2000	3000	3000
76	Հովհարի հանում և տեղադրում	2000	3000	4000	4000
77	Ռադիատորի հանում և տեղադրում	4000	4000	9000	9000
78	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	0	0	0
80	Ռադիատորի վերանորոգում	0	0	0	0
81	Թերմոստատի փոխարինում	3000	3000	6000	6000
82	Ջրի պոմպի փոխարինում	4000	4000	8000	8000
83	Նույնը DOHC և V-6 դեպքում	0	0	0	0
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0

85	Ջրի պոմպի վերանորոգում	0	0	0	0
86	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0
88	Ընդարձակող բաքի փոխարինում	1000	1000	1000	1000
89	Խլարարի հանում և տեղադրում	2000	2000	3000	3000
90	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
91	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
92	Հակասառիչ հեղուկ, խտությունը 40%, 1լ համար	1000	1000	1000	1000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ				
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	2000	2000	5000	0
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	1000	1000	0	0
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	1000	1000	3000	0
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	0	0	0	0
96	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	0	0	0	0
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	15000	15000	35000	0
98	ՓՏ-ի վերանորոգում	10000	10000	48000	0
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	0	0	0	0
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	0	0	0	0
101	Վազքաչափի շարժաբեքի փոխարինում	0	0	0	0
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	0	0	0	0
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	0	0	0	0
104	Նույնը V6-ի համար	0	0	0	0
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	0	0	40000	40000
106	Նույնը V6-ի համար	0	0	0	0
107	ԱՓՏ-ի վերանորոգում	0	0	50000	50000
108	Նույնը V6-ի համար	0	0	0	0
109	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	0	0	10000	10000
	5. Բաշխիչ տուփի, կարդանային լիսեռ				
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	0	0	0	0
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	0	14000	25000	0
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	0	3000	3000	0
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	2000	2000	6000	0
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	0	0	0	0
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	2000	2000	3500	0
116	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	2000	0	3500	0
	6. Առջևի և հետևի կամրջակներ				
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	10000	10000	15000	0
118	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում	8000	8000	14000	0
119	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	0	0	0	0
120	Առջևի կամ հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում	2000	2000	7000	0
121	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	1000	2000	4000	0
	7. Կախոց				
122	Առջևի կախոցի լիկատար քանդում և հավաքում	0	0	0	0
123	Տրավերսի հանում և տեղադրում	5000	7000	25000	20000
124	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում	500	5000	6000	6000
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	2500	2500	6000	6000
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0	0	0	0
127	Հետևի անվակունդի առանցքակալի	0	0	5000	5000

	փոխարինում				
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0	0	0	0
129	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	0	0	0	0
130	Ձախ կամ աջ հողակապի առանցքակախների փոխարինում	0	0	0	0
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	500	500	3000	3000
132	Ձապանակի հանում և տեղադրում	0	0	0	0
133	Ձապակի հանում և տեղադրում	0	0	0	0
134	Ձապակի վռանների փոխարինում	0	0	0	0
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1500	15000	6000	6000
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում	3000	3000	5000	5000
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում	1000	1000	2000	2000
138	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	2000	2000	3500	3500
139	Միջին ձգանի հանում և տեղադրում	1500	1500	1500	1500
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	0	0	0	0
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	3000	3000	3000	3000
142	Վերևի լծակի վռանների փոխարինում	1500	1500	2000	2000
143	Գնդե հողակապերի փոխարինում	1500	1500	3000	3000
144	Ծայրականների հանում և տեղադրում	0	0	0	0
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	0	0	0	0
146	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	500	5000	2000	2000
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	0	0	0	0
148	Հետևի զսպանակի փոխարինում	0	0	0	0
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1500	1500	6000	6000
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	0	0	0	0
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	0	0	0	0
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	1000	0	2000	2000
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	0	0	0	0
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	0	0	0	3000
155	Անվաբացքի կարագավորում	6000	6000	6000	6000
156	Ջողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	500	500	500	500
	8. Ղեկային մեխանիզմ				
157	Ղեկային կայունի հանում և տեղադրում	8000	7000	15000	15000
158	Նույնը V6-ի համար	0	0	0	0
159	Ղեկային կայունի վերանորոգում	0	0	45000	45000
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	0	0	0	0
161	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	0	0	0	0
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	2000	0	2000	2000
163	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	0	0	0	0
165	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
166	Հիդրոուժեղարարի փողոսակի հանում և տեղադրում	2000	0	3000	3000
167	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0
168	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	0	0	0	0
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	0	0	0	0
	9. Արգելակային համակարգ				
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	3000	3000	3000	3000
172	Գլխ. գլանի վերանորոգում	0	0	0	0
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	4000	4000	6000	6000

174	Բանվ. գլանի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000
175	Բանվ. գլանի վերանորոգում	0	0	0	0
176	Արգելակային համակարգի օդահանում	2000	2000	2000	2000
177	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	0	0	4000	4000
178	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	0	0	4000	4000
179	Առջևի սուպպորտի վերանորոգում	0	0	4000	4000
180	Հետևի սուպպորտի վերանորոգում	0	0	4000	4000
181	Արգելակային փողրակի փոխարինում	2000	2000	2000	2000
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	4000	4000	4000	4000
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	0	0	5000	5000
184	Հետևի կոճղակների փոխարինում	4000	3000	0	0
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	2000	2000	4000	4000
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	0	0	4000	4000
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	500	500	500	500
188	ABS-ի հանում և տեղադրում	0	0	1000	1000
189	ABS-ի վերանորոգում	0	0	0	0
190	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	2000	2000	0	0
191	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	1000	1000	0	0
	10. Էլեկտրասարքավորում				
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում	1000	1000	1000	1000
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
194	Գններատորի հանում և տեղադրում	3000	3000	5000	5000
195	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	0	0	0	0
197	Գններատորի վերանորոգում	5000	5000	9000	9000
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում	3000	3000	5000	5000
199	Մեկնարկիչի վերանորոգում	6000	6000	10000	10000
200	Առջևի լապտերի հանում և տեղադրում	100	100	100	100
201	Հետևի լապտերի հանում և տեղադրում	100	100	100	100
202	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	4000	4000	3000	3000
203	Վազքաչափի հանում և տեղադրում	0	0	0	0
204	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	0	0	0	0
205	Սաքերի պանելի հանում և տեղադրում	1000	1000	3000	3000
206	Արագաչափի հանում և տեղադրում	0	0	0	0
207	Ազդանշանի հանում և տեղադրում	0	0	0	0
208	Ապակեվակցիչի շարժիչի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000
209	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
210	Ազդանշանային համակարգի տեղադրում	500	500	500	500
211	Մագնիստոլայի տեղադրում	100	100	100	100
212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
213	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	4000	4000	4000	4000
214	Էլ/հաղորդալարերի հիմնական խտրոցի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
215	Էլ/հաղորդալարերի երկրորդային խտրոցի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000
216	Էլեկտրական տվիչների փոխարինում	500	500	500	500
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում	500	500	500	500
218	Վառոցքի մոմերի փոխարինում	1500	1500	3000	3000
219	Կոնդիցիոների լիցքավորում	0	0	15000	15000
220	Կոնդիցիոների վերանորոգում	0	0	0	0
	11. Այլ ծառայություններ				

221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում	2000	2000	2000	2000
222	Ավտոմեքենայի վազում	2000	2000	2000	2000
223	Անիվի հանում և տեղադրում	600	600	600	600
224	Անվաղողի վերանորոգում	500	500	500	500
225	Անիվի բայանսավորում	1000	1000	1000	1000
226	Անիվի վալց	0	0	0	0
227	CO-գոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	500	500	500	500
228	Խառատային աշխատանքներ	500	500	500	500
229	Փականագործի աշխատանքներ	500	500	500	500
230	Քարշարկի ծառայություն և կմ, համար	1200	1200	1200	1200
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլուղների և այլ օժանդակ նյութերի անվանումները	5 տեղանոց մարդատար հետևի տանող / Գազ 31/	5 տեղ, 4 x 4 տիպի ավտոմեքենաներ/Վազ 2121, Շեվրոլե Նիվա/	Նիսան Իքս Թրայ, Նիսան Դատֆայեդեր	Հունդայի Էլանտրա, Տոյոտա Կամրի
	1. Շարժիչ				
1	Շարժիչի բլոկ	0	0	0	0
2	Շարժիչի գլխիկ	0	0	0	0
3	Բարձիկ	4000	4000	35000	35000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	1500	1500	8000	8000
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	1000	1000	1000	1000
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	20000	20000	20000	20000
7	Շարժիչի փական դուրս մղող	2000	2000	4000	4000
8	Շարժիչի փական ներս մղող	2000	2000	4000	4000
9	Շարժիչի փականի խցուկ	1000	1000	1000	1000
10	Ծնկածն լիսեռ	0	0	0	0
11	Ծնկածն լիսեռի խցուկ առջևի	1500	1500	6000	6000
12	Ծնկածն լիսեռի խցուկ հետևի	1500	1500	7000	7000
13	Ծնկածն լիսեռի արմատական ներդիրներ	4000	4000	7000	7000
14	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդիրներ	4000	4000	7000	7000
15	Հենակային տափոդակ	300	300	300	300
16	Մխոց	4000	4000	10000	10000
17	Մխոցային օղակներ	8000	8000	15000	15000
18	Ատամնանիվ	2000	2000	4000	4000
19	Ատամնավոր փոկ	0	0	0	14000
20	Շղթա	3500	3500	4000	4000
21	Հիդրոձգան	3000	3000	4000	4000
22	Հրիչ	1000	1000	1000	1000
23	Հիդրոհրիչ	3500	3500	4000	4000
24	Բաշմակ	1000	1000	3000	3000
25	Հանգստարար	2000	2000	4000	4000
26	Թափանիվ	0	0	0	0
27	Թափանիվի պսակ	6000	6000	10000	10000
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	0	0	3000	3000
29	Շկիվ	3000	3000	5000	5000
30	Շարժաթև	2000	2000	7000	7000
31	Կարտերի միջադիր	0	0	0	0
32	Միջադիր	3000	3000	3000	3000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ				
33	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	3000	3000	3000	3000
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	4000	4000	4000	4000
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	5000	5000	5000	5000
36	Յուղի գտիչ	2000	2000	4000	4000
37	Յուղի պոմպ	3500	3500	1000	1000
38	Յուղի պոմպի շարժաթև	0	0	0	0
39	Յուղի ուղղիատոր	0	0	0	0
40	Յուղի փողրակ	2000	2000	2000	2000
41	Յուղի ծորակ	0	0	0	0
42	Վառոցքի մոմ	2000	2000	6000	6000

43	Բենզոբաք	0	0	0	0
44	Խառնարակ	0	0	0	0
45	Խառնարակի վերանորոգման հավաքածու	0	0	0	0
46	Ինժեկտորի ֆորսունկա	13000	13000	15000	15000
47	Վառելանյութի մղիչ էլեկտրական	20000	20000	35000	35000
48	Վառելանյութի մղիչ մեխանիկական	0	0	0	0
49	Վառելանյութի գոլիչ	3000	2500	10000	10000
50	Վառելանյութի գոլիչ նուրբ մաքրման	0	0	0	0
51	Վառելանյութի փողորակ	0	0	0	0
52	Աքսելերատորի ճուպան	0	0	0	0
53	Օդի գոլիչ	3000	3000	8000	8000
54	Ջերմաստիճանային տվիչ	1000	1000	1000	1000
55	Յուղի տվիչ	1000	1000	1000	1000
56	Բաշխիչ լիսեռի տվիչ	3500	3500	5000	5000
57	Օդի ծախսի տվիչ	10000	20000	35000	35000
58	Արագաչափի տվիչ	2500	2500	2500	2500
59	Հովհարի տվիչ	500	500	500	500
60	Ջրի տվիչ	500	500	500	500
61	Բենզոբաքի տվիչ	500	500	500	500
62	Մարման ընթացքի կարգավորիչ	100	100	100	100
63	Մարման ընթացքի տվիչ	100	100	100	100
64	Ղեկավարման համակարգիչ	100	100	100	100
65	Պարապ ընթացքի տվիչ	10	10	10	10
66	Դրոսելային փականի տվիչ	10	10	10	10
67	Թթվածնի տվիչ	1000	1000	6000	6000
	3. Սառեցման և արտածման համակարգ				
68	Հովհարի փոկ	10	10	10	10
69	Հովհար	10000	10000	15000	15000
70	Ռադիատոր	30000	30000	55000	55000
71	Ընդարձակող բաք	3500	3500	10000	10000
72	Ռադիատորի փողորակ	1000	1000	2000	2000
73	Թերմոստատ	5000	5000	10000	10000
74	Ջրի պոմպ	13000	13000	25000	25000
75	Ջրի պոմպի առանցքակալ	0	0	0	0
76	Ջրի պոմպի թևակ	0	0	0	0
77	Սառեցման հեղուկ 1 լիտր	2400	2400	2400	2400
78	Ջրի պոմպի սոնանիվ	0	0	0	0
79	Հոլովակ	2500	2500	5000	5000
80	Փոկ	3000	2000	13000	13000
81	Փոկ կոնդիցիոների	0	0	0	0
82	Ծորակ	10	10	10	10
83	Խլարարի ներդիր	2000	2000	4000	3000
84	Խլարարի կախոց	1000	1000	500	500
85	Կրոնշտեյն	500	500	500	500
86	Անուր (խամուտ)	200	200	200	200
87	Խլարար	1000	1000	1000	1000
88	Ուեզոնատոր	100	100	100	1000
89	Վառարանի ռադիատոր	6000	6000	25000	25000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ				
90	Կցորդման բանվորական գլան	5000	5000	15000	0
91	Կցորդման գլխավոր գլան	7000	7000	24000	0
92	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	100	100	100	0
93	Կցորդման տանող սկավառակ	25000	18000	50000	0
94	Կցորդման տարվող սկավառակ	12000	10000	50000	0
95	Կցորդման առանցքակալ	4500	4500	30000	0
96	Կցորդման փողորակ	2400	2400	10000	0
97	Փոխանցման տուփ	10	10	10	0
98	ՓՏ-ի առջևի խցուկ	2000	2000	6000	0
99	ՓՏ-ի հետևի խցուկ	3000	3000	6000	0
100	ՓՏ-ի առանցքակալ	5000	5000	10000	0

101	ՓՏ-ի առաջնային լիսեռ	10	10	10	0
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	10	10	10	0
103	ՓՏ-ի եղանակ	3000	3000	6000	0
104	ՓՏ-ի ատամնանիվ	4000	4000	20000	0
105	Համաժամիչ	2000	2000	7000	0
106	Մուֆտ	3000	3000	8000	0
107	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	1000	1000	18000	0
108	ԱՓՏ-ի զտիչ	0	0	15000	15000
109	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	0	0	1000	100
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	0	0	1000	100
111	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	4000	4000	4000	4000
112	ԱՓՏ յուղ, 1 լիտր	0	0	8000	8000
113	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0	0	0	0
114	Հերմետիկ	4000	4000	4000	4000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ				
115	Բաշխիչ տուփ	0	1000	1000	0
116	Բաշխիչ տուփի խցուկ	0	1000	3000	0
117	Բաշխիչ տուփի առանցքակալ	0	4000	5000	0
118	Բաշխիչ տուփի ատամնանիվ	0	5000	5000	0
119	Բաշխիչ տուփի լիսեռ	0	500	500	0
120	Կարդանային լիսեռ	0	500	40000	0
121	Էլաստիկ մուֆտ	0	5000	15000	0
122	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	4500	10	10000	0
123	Կարդանային լիսեռի խաչուկ	6000	6000	15000	0
	6. Առջևի և հետևի կամրջակներ				
124	Հետևի կամ առջևի կամրջակ	500	500	500	0
125	Ռեդուկտոր	500	500	500	0
126	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	500	40000	50000	0
127	Դիֆֆերենցիալ	500	1000	18000	0
128	Դիֆֆերենցիալի սատելլիտ	3500	3500	10000	0
129	Տանող ատամնանիվի խցուկ	1000	1000	2500	0
130	Տանող ատամնանիվի առանցքակալ	3500	3500	5000	0
131	Դիֆֆերենցիալի առանցքակալ	2500	2500	5000	0
132	Կիսատնի	30000	24000	30000	0
133	Կիսատնու առանցքակալ	4000	4000	12000	0
134	Կիսատնու միջադիր	10	10	10	0
135	Կիսատնու խցուկ	1000	1000	2000	0
136	Կարգավորիչ տափողակ	100	100	100	0
	7. Կախոց				
137	Տրավերս	100	100	100	100
138	Կրոնշտեյն	100	100	100	100
139	Ձախ կամ աջ հողակալ	0	24000	50000	50000
140	Ձախ կամ աջ հողակալի փոշեթիկնոց	0	1500	4000	4000
141	Անվակունդ	15000	13000	26000	26000
142	Անվակունդի խցուկ	10	10	3000	3000
143	Անվակունդի ներքին առանցքակալ	3500	3500	13500	13500
144	Անվակունդի արտաքին առանցքակալ	3000	3000	10000	10000
145	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	0	0	100	100
146	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	0	0	4000	4000
147	Ձախ կամ աջ հողակալի խցուկ	500	500	2500	2500
148	Հարվածամեղմիչի թասակ	2000	2000	8000	8000
149	Ջսպանակ	0	0	0	0
150	Առջևի հարվածամեղմիչ	12000	10000	50000	50000
151	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	100	100	6000	6000
152	Հարվածամեղմիչի վռան	1000	1000	2000	2000
153	Ներքևի լծակ	7000	8000	38000	38000
154	Ներքևի լծակի վռան	2500	1800	9500	9500
155	Վերևի լծակ	1000	1000	37000	37000
156	Վերևի լծակի վռան	2500	2000	8000	8000
157	Գնդե հողակալ	4500	4500	10000	10000

158	Առջևի կայունարար	0	0	0	0
159	Առջևի կայունարարի վռան	2000	1000	5000	5000
160	Առջևի կայունարարի առջևի վռան	0	0	0	0
161	Հետևի զսպանակ	0	0	0	0
162	Հետևի ցնցամեղմիչ	12000	12000	40000	40000
163	Հետևի մետաղածող (շտանգա)	0	4500	8000	8000
164	Հետևի մետաղածողի (շտանգա) վռան	0	500	6000	6000
165	Հետևի անկյունագծային լծակ	0	0	1000	1000
166	Անկյունագծային լծակի վռան	0	0	4000	4000
167	Չսպակ (ռեսսորա)	15000	0	0	0
168	Չսպակի վռան	3000	0	0	0
169	Չսպակի միջադիր	500	0	0	0
170	Չսպակի բռնիչ	1000	0	0	0
171	Աջ կամ ձախ ձգան	5000	8000	15000	15000
172	Ծայրակալ	2500	3500	9000	9000
173	Ձգան մեջտեղի	6000	8000	4000	4000
174	Անվահեծ	10	10	10	10
	8. Ղեկային մեխանիզմ				
175	Ղեկային կայուն	25000	25000	60000	60000
176	Ղեկային կայունի առանցքակալ	4000	1000	5000	5000
177	Ղեկային կայունի խաչուկ	4000	10	5000	5000
178	Հիդրոուժեղարար	10	10	100	100
179	Հիդրոուժեղարարի փոկ	10	10	1000	1000
180	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	10	10	10000	10000
181	Հիդրոուժեղարարի պոմպ	10	10	1000	1000
182	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	10	10	10	10
183	Ղեկային ձող	1500	10	10	10
184	Ղեկային ձողի ծայրակալ	2000	10	10	10
185	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	3000	3000	6000	6000
186	Ճոճանակ	5000	5000	10	10
187	Ճոճանակի վռան	1000	1000	10	10
	7. Արգելակային համակարգ				
188	Գլխ. գլան	8000	8000	35000	35000
189	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	1000	1000	1000	1000
190	Վակուումային ուժեղարար	20000	20000	40000	40000
191	Բանվ. գլան	4000	5000	6000	6000
192	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	10	10	10	10
193	Արգելակային փողորակ	2000	2000	8000	8000
194	Սուպպորտի ուղղորդիչ	500	500	7000	7000
195	Սուպպորտի մանժետ	500	5000	7000	7000
196	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	10000	10000	35000	35000
197	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	0	8000	35000	35000
198	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	11000	11000	0	0
199	Առջևի արգելակային սկավառակ	10000	10000	25000	25000
200	Հետևի արգելակային սկավառակ	10000	10000	25000	25000
201	Ձեռքի արգելակի ճուպան	1000	500	500	500
202	ABS-ի տվիչ	0	0	10000	10000
203	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	2000	2000	0	0
204	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	0	0	3000	3000
205	Ձեռքի արգելակի ճուպան	0	0	0	0
	9. Էլեկտրասարքավորում				
206	Գեներատոր	30000	30000	50000	50000
207	Գեներատորի դիողային կամրջակ	7000	7000	8000	8000
208	Գեներատորի ռեյե	5000	5000	8000	8000
209	Գեներատորի առանցքակալ	2000	2000	6000	6000
210	Ստարտեր	28000	28000	45000	45000
211	Ստարտերի ռեյե	1500	1500	10000	10000

212	Ստարտերի ածուխ	4000	4000	10000	10000
213	Բենդերք	6000	6000	10000	10000
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	7000	7000	10000	10000
215	Առջևի լապտեր	10	10	10	10
216	Առջևի թարթիչ	10	10	10	10
217	Հետևի լապտեր	10	10	10	10
218	Հետևի թարթիչ	10	10	10	10
219	Արգելակային լապտեր	10	10	10	10
220	Լամպ	3000	3000	5000	5000
221	Էլեկտրական անջատիչ	2500	2500	4500	4500
222	Էլեկտրական տվիչ	5000	5000	5000	5000
223	Էլեկտրական չափիչ սարք	1000	1000	4000	4000
224	Բռնկման կողպեք	7000	7000	8000	8000
225	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	15000	15000	15000	15000
226	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	6000	6000	6000	6000
227	Վառոցքային լարերի խուրց	6000	6000	10000	10000
228	Վառոցքի մոմի ծայրակալ	2000	1000	2500	2000
229	Վազքաչափ	10	10	10	10
230	Վազքաչափի ճոպան	10	10	10	10
231	Արագաչափ	10	10	10	10
232	Ազդանշան	10	10	10	10
233	Ապակեվացիչ	4000	4000	4000	4000
234	Ապակեվացիչի շարժիչ	10	10	10	10
235	Դռների կենտրոնական փական	10	10	10	10
236	Ազդանշաային համակարգ	10	10	10	10
237	Մագնիստոյա	10	10	10	10
238	Էլեկտրաամբարձիչ	6000	6000	5000	5000
239	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	6000	6000	15000	15000
240	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	3500	3500	3500	3500

1 - պարտադիր պայման է օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի չօգտագործված լինելը

2 - Տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում

3- պարտադիր պայման է հանդիսանում մինչև ավտոմեքենայի վերանորոգումը տրամադրել տեղեկանք ավտոմեքենայի անսարքության և վերանորոգման համար պահանջվող գումարի մասին

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

		Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**														
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ԸՆԴՅՈՒՆ		
1	50111170-2	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում	-	-	-	-	141420	141420	306410	306410	306410	306410	471400	471400	471400	471400	471400
2	50111170-3	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում	-	-	-	-	285000	285000	617500	617500	617500	617500	950000	950000	950000	950000	950000
3	50111170-4	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում	-	-	-	-	171000	171000	370500	370500	370500	370500	570000	570000	570000	570000	570000
4	50111170-5	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում	-	-	-	-	147000	147000	318500	318500	318500	318500	490000	490000	490000	490000	490000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
 ք. Երևան, Կառավար. տուն, մասն. 3
 ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
 900011019073
 02508219



ՎԱՏԱՐՈՂ

Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
 ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
 «Արարատրանկ» ԲԲԸ
 Հ/Հ 1510012745550100



Պայմանագրի կողմ	Պատվիրատու
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2018թ.

Պայմանագրի համարը՝ «ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԾՁԲ-18/1-1»

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2018թ. դուրս գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայություններ				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

« 22 » մայիս 2018թ. կնքված
«ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԾՁԲ-18/1-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 2018 թ. _____-ին կնքված N _____-ին
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2018թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած

ազգանուն, անուն

ստորագրություն